

**ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔԱՍՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N 21/4

ք. Երևան

10 ապրիլի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ Ա/Ձ Նարեկ Կիրակոսյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ա/Ձ Նարեկ Կիրակոսյանը հայտնում է, որ գրանցված օրվանից առ այսօր զբաղվում է մանրածախ առևտրով և մինչև 31.12.2017թ. համարվել է շրջանառության հարկով հարկվող: Համախառն շրջանառությունը մինչ այսօր չի գերազանցել 10 (տաս) միլիոն ՀՀ դրամը: Այս տարի նույնպես չի նախատեսվում շրջանառության էական աճ և համապատասխանաբար պլանավորվում է, որ պետք է շարունակի աշխատել շրջանառության հարկով հարկման դաշտում:

Ա/Ձ Նարեկ Կիրակոսյանը տեղյակ է, որ ըստ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի պարտավոր է մինչև սույն թվականի փետրվարի 20-ը հարկային մարմին ներկայացնել էլեկտրոնային հայտարարություն շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ, սակայն առողջական խնդիրներ ունենալու պատճառով ի վիճակի չի եղել սահմանված ժամկետում ներկայացնել վերը նշված հայտարարությունը: Արդյունքում Ա/Ձ Նարեկ Կիրակոսյանն անցել է ԱԱՀ-ով հարկման դաշտ:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Նարեկ Կիրակոսյանը խնդրում է 01.01.2018թ. համարել շրջանառության հարկ վճարող և կասեցնել իր նկատմամբ ԱԱՀ ամսական հաշվետվություն չներկայացնելու վարույթը:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Ա/Ձ Նարեկ Կիրակոսյանը ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառվել է 25.04.2017թ.:

Հարկային մարմնի կողմից 04.05.2017թ. Ա/Ձ Նարեկ Կիրակոսյանին սահմանված կարգով ծանուցվել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու վերաբերյալ: 04.05.2017թ. Ա/Ձ Նարեկ Կիրակոսյանի կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացվել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն և 2017թ. ընթացքում նա համարվել է շրջանառության հարկ վճարող: 2017թ. ընթացքում Ա/Ձ Նարեկ Կիրակոսյանի իրացման շրջանառությունը կազմել է 720.500 դրամ:

Ա/Ձ Նարեկ Կիրակոսյանի կողմից 2018թ. փետրվարի 20-ը սահմանված կարգով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն չի ներկայացվել:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ Հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով հստակ սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատագրած ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Նարեկ Կիրակոսյանի կողմից մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին չի ներկայացվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, հետևապես 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող չի կարող համարվել:

Ինչ վերաբերվում է բողոքում բերված այն պնդումներին, որ առողջական խնդիրների պատճառով Ա/Ձ Նարեկ Կիրակոսյանն ի վիճակի չի եղել սահմանված ժամկետում ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել, որ բողոքի քննության ընթացքում նշված պնդումները հիմնավորող որևէ ապացույց չներկայացվեց:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ա/Ձ Նարեկ Կիրակոսյանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ